ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԳԻՏԱԺՈՂՈՎ 2025

ՀՐԱՎԵՐ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում իրականացվող գիտական հետազոտությունները ամփոփելու և գիտական գործունեության զարգացման հեռանկարները նախանշելու նպատակով նոյեմբերի 6-8-ը կազմակերպվելու է տարեկան ամփոփիչ գիտաժողով:

Հրավիրում ենք ԵՊԲՀ բոլոր հետազոտողներին ներկայացնելու վերջին տարիներին իրականացված ընթացիկ և/կամ ավարտուն գիտական հետազոտությունների թեզիսներ, որոնք փորձաքննության դրական եզրակացություն ստանալու դեպքում կստանան DOI (թվային նույնականացուցիչ) և կհրապարակվեն ԵՊԲՀ-ի ՄԵԴԵՐԻԿ հանրահասանելի էլեկտրոնային տվյալների շտեմարանում, ինչպես նաև համալսարանի կայքէջում:

Գիտաժողովի 1-ին օրը նվիրված է թեզիսների բանավոր և ցուցապաստառային ներկայացումներին, 2-րդ օրը ամբիոնների վարիչները կներկայացնեն ամբիոնական գիտական գործունեության ամփոփ պատկերը, որը պետք է արտացոլի 2025 թվականի տարեկան հաշվետվության (ձև 2) բովանդակությունը: Գիտաժողովի վերջին օրը հրավիրվում են Փորձագիտական հանձնաժողովների նախագահները՝ ներկայացնելու բանավոր զեկուցումներ ոլորտի ձեռքբերումների և առկա խնդիրների վերաբերյալ: Գիտաժողովի աշխատանքների արդյունքները կամփոփվեն գիտության գծով պրոռեկտորի՝ նոյեմբերի 26-ին նախատեսված գիտական խորհրդի հաշվետու զեկույցում:

Թեզիսների ներկայացման վերջնաժամկետը *նոյեմբերի 3-ն է:* Բանավոր զեկուցման ներկայացվող թեզիսի միայն վերնագիրն ու հեղինակի/ների անվանումը/ները անհրաժեշտ է ներկայացնել մինչև *հոկտեմբերի 24-ը:* Ասպիրանտների և հայցորդների բանավոր զեկուցումները խրախուսվում են:

Թեզիսներն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային տարբերակներով՝ science@ysmu.am էլեկտրոնային հասցեին: Ամբիոնական աշխատանքների շրջանակում ներկայացվող թեզիսների ցանկն ամբիոնի վարիչը վավերացնում է ստորագրությամբ և ներկայացնում է Գիտության վարչություն: